

ՄԱՀԱՐԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ.

Լէրնէսի Ռընալի արքայական ծառայական Փարլիլի Սարգսի համալսարանի
լսարանում Մարտի 29 1883 թ.:

ՏԻԿԻՆՆԵՐ ԵՒ ՊԱՐՈՆՆԵՐ.

Այս լսարանումը, որը շատ անգամ իւր քաղցր ուշադրութիւնը ինձ նուիրած է, համարձակումով այսօր ևս խօսել ձեր առաջ մի դժուար խնդրի մասին, որի մէջ հաղիւ հաղ գանգումն նշմարելի կէտեր, որոնց վերայ պէտքէ աւելի ուշք դարձնի նա, ով որ կամենումէ մաքրել պատմական գիտութիւնը սխալ ենթադրութիւններից և անհիմն կարծիքներից, Ազգերի և ցեղերի անունների սխալ գործածութիւնը պատմութիւն ուսուցանելիս գրեթէ միշտ տարակուսութեան և անհասկացողութեան է հասցնում: Այնպէս են խօսում Յոյների, Հռովմայեցիների և Արաբացիների մասին, կարծես թէ այս բառերը միշտ իւր նման մարդիկների խումբ նշանակէին. և բնաւ ուշք չեն դարձնում այն փոփոխութիւնների վերայ, որոնք յառաջ են եկել պատերազմական, կրօնական ու լեզուական յաղթութիւններից, և այն ամեն տեսակ մեծ հոսանքներից, որոնք մարդկային պատմութեան միջով անցել են: Իրականութիւնը չէ կարելի այսպէս հասարակ կերպով կազմել: Օրինակ, մենք ֆրանսիացիներս լեզուով հռովմայեցի ենք, քաղաքակրթութեամբ Յոյն, իսկ կրօնով Հրէայ: Մի ցեղ, որի ծագման իրողութիւնը սկզբում մի ազգի համար շատ նշանակուր է լինում, կորցնումէ իւր նշանակութիւնը այն չափով, որ մեծ պատմական իրողութիւնները ինչպէս Յունական քաղաքակրթութիւնը, Հռովմէական աշխարհակալութիւնը, Գերմանական աշխարհակալութիւնը, Քրիստոնէութիւն, Մահմետականութիւն, վերածնութիւնը, փիլիսոփայութիւնը և կրօնական յեղափոխութիւնը վերայ են հասնում և ջրաղացքի քարի տակ ընկած ցորենի հատիկի նման տրորում և ջնջում են մարդկային ընտանիքի բաղմազանութիւնը, ստիպելով նոցա միանալ սակաւ կամ շատ միատեսակ զանգուածների հետ, եւ կաշխատեմ այսօր քննել այդ տեսակ խառն հասկացողութիւններից մինը. ես այստեղ ի նկատի ունիմ հետեւեալ բառերի անպարզութիւնը և անճշտութիւնը. — արարական փիլիսոփայութիւն, արաբական գիտութիւն, մահմետական քաղաքակրթութիւն, Այդ առարկաների անորոշ հասկացողութիւնից յառաջացել են շատ անհիմն գատողութիւններ, և մինչև անգամ մի քանի նշանակուր գործնական սխալներ:

Մահմետական երկիրների ներկայ թուլութիւնը յայտնի է այն ամենին, ով որ փոքր ի շատէ իրերի դրութեան հետ ծանօթ է. բոլորովին ակներև է այն տէրութիւնների անկումը, ուր թագաւորումէ Մահմետականութիւնը, և այն ցեղերի մտաւոր ոչնչութիւնը, որոնք բացա-

ռապէս իրանց կրթութեամբ և մտաւոր զարգացմամբ պարտական են այդ կրօնին, նոցա, որոնք եղել են Ափրիակայում և կամ արեւելքում միշտ ապշեցրել է ամեն մի ուղղափառի (մուսուլման) մտաւոր սաճման արտաբերութիւնը։ Նորա գլուխը այնպէս է ճնշուած իրկաթէ մամուլով, որ նորան բոլորովին անընդունակ է դարձնում մի որ և է գիտութիւն սովորելու և կամ մի նոր գաղափար իւրացնելու։ Մասնաւոր կանի մանուկը, երբեմն ոչ նուազ ընդունակ է տասնամեայ կամ երկուստասնամեայ հասակում, բայց երբ ստանում է իւր կրօնական կրթութիւնը, յանկարծ դառնում է սաստիկ կրօնամոլ, և նորա վերայ իշխում է մի յիմար ամբարտաւանութիւն։ Նա կարծում է թէ արդէն ճանաչեց բացարձակ ճշմարտութիւնը և հրճվում է սովորաբար այն բանով, որ իսկապէս նորա մտքի թուլութիւնն է կազմում։ Այս յիմար ամբարտաւանութիւնը ամեն մի մասնատական արմատական թեորութիւնն է։ Նորա աստուածապաշտութեան կարծեցեալ պարզութիւնը և բնականութիւնը թելադրում է այնպիսի մի արհամարհանք դէպի միւս կրօնները, որը ոչ մի կերպով չէ կարելի արդարացնել։ Համոզուած լինելով, որ Աստուած՝ առանց ի նկատի ունենալու մարդկային արժանաւորութիւն և կրթութիւնը, ուղարկում է հարստութիւն և իշխանութիւն ու՛մ որ ինքն է կամենում, մասնատականը սաստիկ արհամարհանք է տածում դէպի գիտութիւն, կրթութիւն, մէկ խօսքով դէպի այն ամեն բանը, ինչից որ կազմուած է Աւրոպացու խելքը։ Մեր՝ մասնատականութեան վերադրած յատկանիշը այնպէս խիստ է երեւում, որ ջնջում է ցեղական և ազգային բոլոր յատկանիշները։ Բերբերցիին, Սուտանցիին, Հերբէզը, Աֆղանստանցիին, Մալայցիին, Ադիպտացիին, Նուբիացիին մասնատականութիւն ընդունելուց յետոյ, այլ ևս ոչ թէ Բերբերցիներ, Սուդանցիներ են կոչվում, այլ մասնատականներ։ Պարսկաստանը միայն բացառութիւն է կազմում, նա կարողացաւ պահպանել իւր յատուկ ոգին, սակայն նա մասնատականութեան պատմութեան մէջ մի առանձին տեղ ունի բռնած, և նորան իսկապէս պէտք է անուանել Շիի երկիր, և ոչ թէ մասնատականի։

Արպէս զի փոքր ինչ կարողանան մեղմացնել մասնատականութեան մասին եղած տխուր եզրակացութիւնները, որոնք իրերի ընթացքից են յառաջ գալիս, — շատերը կամենում են մեղհաւատացնել որ այդ անկումը անցողաբար կատարուած մի երեւոյթ է։ Աւ որպէս զի ապագայում հանգիստ լինեն, յիշում են անցեալը։ Նոքա ասում են, «մասնատական քաղաքականութիւնը, որ այժմ այնքան շնչին է, կար ժամանակ որ ամենածաղկած դրութեան մէջ էր, նա հանդէս բերեց իւր նշանաւոր փիլիսոփաներին և գիտնականներին։ Նա շատ դարերի ընթացքում քրիստոնեայ արեւմտքի գաստիարակիշն էր»։ Սակայն ինչո՞ւ արդեօք միանգամ եղածը, այլ ևս չէ կրկնվում, ահա թէ ինչի մասին էի կամենում խօսել։ Վա՛ր արդեօք մասնատական և կամ գոնէ

մահմետականութիւնից թողլատրուած և նորան ղիմացած զետու-
թիւն:

Այն փաստերը, որոնց վերայ մահմետականութեան պաշտպանները
մատնացոյց են լինում, ունին ճշմարտութեան մի նշանաւոր մասն:
Այո՛, մտ 775 Ք. թուից սկսած մինչև ԹՎ. զարու կէսը, այսինքն
հինգ զարերի ընթացքում, մահմետական երկիրներում պատահում են
խորին յարգանաց արժանի գիտնական և խոհուն մարդիկ: Մինչև ան-
գամ, կարելի է ասել, որ մահմետական աշխարհի մտաւոր զարգացումը
քրիստոնեայ աշխարհից շատ վեր էր կանգնած: Բայց որպէս զի սորա-
նից սխալ եզրակացութեան չըզանք, հարկաւոր է այս փաստը մանրա-
մասն վերլուծել: Չափազանց կարեւոր է հետամուտ լինել զարէ ցգար
արեւելքի քաղաքակրթութեանը, որպէս զի կարողանանք պէտք եղածին
չափ որոշել այդ զանազան տարրների ամեն մինի խաղացած դերը,
որոնցով, յիշատի, պայմանաւորուած էր վերոյիշեալ ժամանակաւոր
զերազանցութիւնը, որ և շատ շուտ անհետանում է:

Այն՝ ինչ որ մենք փիլիսոփայութիւն և գիտութիւն ենք անուանում,
մահմետական առաջին դարուց շատ հեռու էր: Մահմետականութիւնը,
սեմական միաստուածութեան զանազան ձեւերից կազմուած, կրօնական
պատերազմի ծնունդ լինելով, հազարաւոր մղոն հեռացած է այն ամեն
բանից, ինչ որ մենք գիտութիւն կամ մտաւոր զարգացում ենք կո-
չում: Այս ևս պէտք է ասել որ նա բաւական երկար պատերազմ մղե-
լուց յետոյ կարողացաւ Արաբացիների մտաւոր կեանքին տիրապետել:
Արաբական հեծեալներն այդ կրօնին յարեցան նորա համար, որ դա
թողլատրումէր ասպատակութիւն և աշխարհակալութիւն, որով և նոքա
իրանց ժամանակին աշխարհի մէջ առաջին աշխարհակալ էին համար-
վում, բայց ի հաբէէ, բնաւ փիլիսոփայ չէին:

ԹՎ. զարու արեւելեան մատենագիր Արուստարաջը, նկարագրելով
արաբական ազգի բնաւորութիւնը, ասում է հետեւեալը: Այդ ազգի գի-
տութիւնը, որով նա պարծենում էր, կայանում էր լեզուագիտութեան,
տաղաչափութեան զանազան ձեւերի և արձակ բան գրելու մէջ: Իսկ ինչ
վերաբերում է փիլիսոփայութեան, Աստուած այդ չէ տուած, և ոչ էլ
այդ գիտութեան ընդունակ է արել: Այս՝ մի՛ կատարեալ ճշմարտու-
թիւն է: Թափառական արաբացի բոլոր մարդիկներից նուազ միստիկ է.
նա բնաւ հակում չունի գէպի խոհադատութիւն: Բոլոր եղածները
կրօնամոլ Արաբացուն բացատրելու համար բաւական է միմիայն Արա-
բիչ Աստուած, որ անմիջապէս կառավարում է աշխարհին և յայտնվում է
մարդկանց մարգարէների միջոցաւ, որոնք անընդհատ իրար էին յա-
ջորդում: Այս պատճառաւ, քանի որ մահմետականութիւնը տարած-
ուած էր արաբական ցեղերի մէջ, այսինքն առաջին չորս խալիֆների և
օմայյանների ժամանակը, նոցա մէջ ոչինչ մտաւոր շարժողութիւն չէ
յառաջանում: Օմարը չայրեց Աղիքսանդրեան մատենադարանը, ինչպէս

որ պատմումեն, արդէն դա Օմարից փոքր ինչ առաջ անհետացած էր։ Բայց, այն սկզբունքը, որ նա գործ էր դնում աշխարհիս մէջ, մի անբիշ բնաւորութիւն ունէր գիտնական հետազոտութիւնների և առհասարակ ամեն մտաւոր աշխարհի համար։

Ամեն բան փոխվումէ, երբ Պարսկաստանը թագաւորութիւն է ձեռք բերում և նորա հետ միասին Աբասեան ցեղը, Բինի—Օմայդները, յաղթող են հանդիսանում։ Մահմետականութեան կեդրոնը փոխվումէ դէպի Եփրատ և Տիգրիս գետերի մէջ եղած երկրները, ուր դեռ ևս երեսում էին փայլուն քաղաքակրթութեան մի քանի հետքեր։ Այդ քաղաքակրթութիւնը, որ մի ժամանակ ծանօթ էր արեւելքին, այսինքն Պարսից Սասանեաններին, Խոսրով Նուշիրվանի ժամանակը իւր փառքին է հասնում։ Արհեստն ու արդիւնաբերութիւնը ծաղկումեն մի քանի դար այդ երկրներում։ Խոսրովը պաշտպան է հանդիսանում նոյնպէս մլտաւոր գործունէութեան։ Ա. Պոլսից հալածուած փրիստփայլութիւնը պատսպարան է գտնում Պարսկաստանում։ Խոսրովը թարգմանել է տալիս հնդկական գրաւոր աշխատութիւնները, նեստորական քրիստոնեաները, որոնք բնակիչների նշանաւոր մասն էին կազմում։ Ծանօթ էին յունական փրիստփայլութեան և գիտութեան հետ։ Նորա պարապում էին նաև բժշկականութեամբ։ Նոցա եպիսկոպոսները տրամաբանութեան և երկրաչափութեան ուսուցիչներ էին։ Սասանեանների ժամանակից ծաղկած պարսկական վիպական զրոյցների մէջ պատմվումէ թէ երբ Ռուստէմը կամենումէր կամուրջ շինել, կանչեց Զաթալիկին (Պաթուղիկոսին) — այսպէս էին կոչվում նեստորականների եպիսկոպոսները կամ պատրիարքները) — ճարտարապետի պաշտօնը վարելու համար։

Մահմետականութիւնից բարձրացած կրօնական փոթորիկը կանգնացնումէ Իրանի այս գեղեցիկ զարգացումը։ Ասկայն, Աբբասեան ցեղի գահ բարձրանալովը նորից վերածնունեց Խոսրովի փայլուն ժամանակը։ Այն յեղափոխութիւնը, որով այս ցեղը գահ բարձրացաւ, կատարուեցաւ պարսկական զինւորականների ձեռքով, պարսից զօրապետների առաջնորդութեամբ։ Նոր թագաւորող տան հիմնադիր Աբուլ Աբասը, նամանաւանդ Մանղուրը միշտ պարսիկներով էր շրջապատուած։ Նոքա էին մի որոշ աստիճանով յարութիւն առած Սասանիդներ, նոցա մերձաւոր խորհրդականներն, իշխանների դաստիարակիչներն և առաջնակարգ նախարարներն էին Բարմեկիդներ, որոնք՝ բաւական լուսաւորուած հին-պարսկական ընտանիքին էին պատկանում և Պարսից ազգային կրթութեանը հաւատարիմ էին մնացել։ Բայց վերջը, ահամայ յարեցան մահմետականութեան։ Շուտով այդ սակաւահաւատ Խալիֆներին շրջապատումեն նեստորականները և մի առանձին արտօնութեամբ դառնումեն նոցա առաջին բժիշկներ, Խառան քաղաքը, որ բոլորովին առանձին դեր էր խաղում մարդկային զարգացման պատմութեան մէջ, մնալով հեթանոսութեան մէջ, կարողանումէ յունական

հնութիւնների բոլոր աւանդութիւնները հաւատարիմ պահպանել, նա ընծայումէ նոր դպրոցին բազմաթիւ գիտնականներ մանաւանդ աստղաբաշխներ, որոնք օտար էին մահմետականութեան:

Բաղդադը հռչակուեց իբրեւ մայրաքաղաք վերածննդող Պարսկաստանի: Արարերէնը, իբրեւ աշխարհականների լեզու, չէր կարող մոռացուել, չէր կարող նոյնպէս և նոցա կրօնը բոլորովին մերժուած համարուել, բայց այս նոր քաղաքակրթութեան ոգին ունէր մի խառն ընաւորութիւն: Քրիստոնեաներն ու Պարսիկները առաջին տեղն են բռնում. կառավարչական մասը մանաւանդ ոստիկանականը կենդրոնանումէ առաջինների ձեռքը: Կարլովինգների ժամանակակից բոլոր այս նշանաւոր Խալիֆաները — Մանդուրը, Հարուն - Ալ - Բաշիդը, Մամունը — գրեթէ մահմետական չէին: Նոքա կատարումէին կրօնի միայն արտաքին ծեսերը, որի ներկայացուցիչ և պապ էին համարվում: — Եթէ կարելի է այսպէս ասել, բայց նոցա միտքը հետի էր նորանից, նոքա սաստիկ հետաքրքրվումէին այն ամեն բանով, ինչ որ հեթանոս ազգերին էր պատկանում. նոքա հարցութեան էին անում և տեղեկանում Պարսկաստանի, Հնդկաստանի նամանաւանդ Յունաստանի մասին: Սակայն այս ևս ճշմարիտ է, որ երբեմն մահմետականութեան ջերմ պաշտողներին յաջողումէր պալատի մէջ այնպիսի ներգործութիւն ունենալ, որով Խալիֆը դառնումէր առ ժամանակ մի սաստիկ կրօնամոլ և զոհումէր իւր անհաւատ և ազատամիտ ընկերներին: սակայն երկար չէ տևում. նորից անկախութեան և ազատամտութեան քամին փչումէ և խալիֆը դարձնալ կանչումէ իւր մօտ գիտնականներին ու սեղանակից ընկերներին և ի մեծ տհաճութիւն մահմետական կրօնաւորների, շարունակումէ առաջուայ պէս իւր ազատ կեանքը:

Ահա այսպէս է բացատրվում Բաղդադի գեղեցիկ քաղաքակրթութիւնը, որի դիւթիչ պատկերներն այնքան կենդանի են արտայայտվում «Հազար և մի գիշեր» կոչուած զրոյցների մէջ, որ մի զարմանալի խառնուրդ է ներկայացնում պաշտօնական սպանունիքների և գաղտնի անառկութեան: Այս ջանասէր եղիտասարգութեան և սակաւահաւատութեան մի ժամանակ է, երբ ֆանատիկական կրօնի թերահաւատ առաջնորդների շնորհիւ ծաղկում են գիտութիւններ և արուեստները: Երբ ամեն մի ազատասէր մարդ միշտ լաւ ընդունելութիւն էր գտնում պալատում, թէեւ քրէական օրէնքը նորան միւսնոյն ժամանակ պատիժներ էր սպանում:

Կեղեցիկ իմն զարգանումէ ազատ մտածողութիւնն այդ խալիֆաների ժամանակը, որոնք թէեւ հալածանք յարուցին, բայց միշտ ակամայից: Մոտեկալլեների մէջ կամ վիճաբանները կազմումէին առանձին ժողովներ, ուր քննադատումէին ամեն կրօններ բանականութեան սկզբունքի հիման վերայ: Ես այստեղ յառաջ կը բերեմ այդ ժողովի արձանագրութիւնը, որ մի խստակրօն անձն է գրել և նորանից թարգմանել է Պ. Գոգեն:

Ահա նորա թարգմանութիւնը.

Կայրոսեցի մի գիտնական հարցնումէ Սպանիացի համեստ աստուածաբանից, որ ճանապարհորդել էր դէպի Բաղդատ. « արդեօք նա իւր՝ այն տեղ (Բաղդատ) եղած միջոցին այցելել է մոտեկալիւնիմների ժողովները »: Ես երկու անգամ այցելեցի. պատասխանեց Սպանիացին, և իհարկէ էլ չըզնացի. « ինչո՞ւ. « լսիր ահա »: Հարունակեց ճանապարհորդը. « Առաջին ժողովում, որին ես այցելեցի, ներկայ էին ոչ միայն մահմեդականներ իրրե ուղղափառներ, այլ, այլև աղանդաւորներ, անհաւատներ, գերրներ, նիւթապաշտներ, անաստուածներ, հրէաներ և մէկ խօսքով ամեն տեսակ հերձուածներ: Իւրաքանչիւր աղանդ ունէր իւր ներկայացուցիչը, որ պարտական էր նորա համոզմունքը պաշտպանել ժողովի մէջ, և ամեն անգամ երբ նոցանից մինը դահլիճ էր մըտնում, բոլորը յարգանքօք ոտքի էին կանգնում և մինչև նորա նստելը չէին նստում: Երբ ամենքը ժողոված էին, անհաւատներից մինը ասաց հետեւեալը. — Մենք այստեղ ժողովուած ենք, որպէս զի դատենք և ճշմարտութիւն իմանանք. արդէն պայմանները ձեզ յայտնի են: Գո՛ւք, մահմետականներ, ոչինչ ապացոյց չըբերէք ձեր զրբից, և կամ թէ այնպիսի հիմունքներ, որոնք ձեր մարգարէների հեղինակութեան վերայ են հիմնուած, որովհետև մենք ոչ մեկին չենք հաւատում: Ամեն մինը այն ապացոյցներով պիտի առաջնորդուի, որոնք բանականութիւնից են դուրս գալիս »: Այս խօսքերը ասելիս բոլորն էլ ծափահարեցին: Այժմ ձեզ շատ լաւ հասկանալի է, ասաց Սպանիացին, որ ես՝ այդ տեսակ խօսքը լսելուց յետոյ, այլ ևս չէի կարող այն տեղ մնալ: Ինչ առաջարկեցին այցելել հետեւալ ժողովը, քայց ես այնտեղ ևս նոյնպիսի տգեղութիւններ գտայ »:

Այսպիսով ուղղափառների սպառնալիքները առ ժամանակ չեն ներգործում, և սորա հետեանքը լինումէ իսկական փիլիսոփայական և գիտնական շարժողութիւն: Սիրիայի քրիստոնեայ բժիշկները երևում են վերջին յունական դպրոցների շարունակողներ. նորա ծանօթ էին Արիստոտելեան փիլիսոփայութեան, մաթէմատիկայի, բժշկականութեան և աստղաբաշխութեան հետ: Խալիֆները նոցա յանձնեցին թարգմանելու արաբական լեզուով Արիստոտելի, Եւկլիդեսի և Պալլիէնի հանրագիտական գրուածքները, մի խօսքով բոլոր յունական գիտութիւնը, որքան որ այն ժամանակ Արաբիայում յայտնի էր: Գործունեայ մտքերը, ինչպէս օրինակ, Ալկիզները, սկսումեն մտածել այն յաւիտեանական խնդիրների վերայ, որոնց մարդ կարող է միայն զարթեցնել, իսկ վճռելը՝ ո՛չ: Այդ տեսակ մարդկանց անուանումէին « ֆիլզօփաներ » (philosophos)՝ այն ժամանակից այս օտար բառը գործ էր ածվում վատ մտքով. իրրե մի օտար բան մահմետականութեան. « Ֆիլզօփ »-ը մահմետականների մօտ դառնումէ մի զարհուրելի տիտղոս, որի հետ կից էր մահ կամ հալածանք. նոյնպէս « զենդիկ »-ը, և վերջին ժամա-

նակներս • ֆարմասուն • (franc — maçon աղատ — որմնադիր), Պէտրէ ասել որ զուտ գիտութիւններ ծաղկումն մահմեդական աշխարհում : Կազմվումէ մի տեսակ փիլիսոփայական ընկերութիւն Խղուանէս — սաֆա (ճշմարտութեան եղբայրներ) անունով, որ տպագրումէ փիլիսոփայական հանրագիտական գրուածքներ, որոնք ուշադրութեան արժանի են իրանց գիտնականութեամբն ու վսեմ մտքովը : Հուսով երկու մեծ գիտնականներ Ալֆարաբին և Ավիցեննան՝ երբեմն գոյութիւն ունեցող բազմակողմանի մտածող մարդիկներէ տեղը բռնեցին : Աստղաբաշխութիւնն ու հանրահաշիւը հասնումն իրանց փայլուն զարգացմանը, մանաւանդ Պարսկաստանում : քիմիան շարունակուէր իւր դանդաղ և աննկատ աշխատութիւնը, ցոյց տալով երբեմն երբեմն իւր գոյութիւնը զարմանալի գիւտերով : օրինակ՝ ջրի պարզելը, և մինչև անգամ վառօտի դիւտը : Արեւելքի օրինակին հետևումէ մահմեդական Սպանիան և սկսումէ գիտութեամբ պարապել, ուր հրէաները ցոյց են տալիս իրենց գործունեայ աշխատակցութիւնը : ԺԲ. դարում Իրն — բաջան, Իրն — Տոֆայլն և Ավերսէսը փիլիսոփայութիւնը այնպիսի մի աստիճանի վերայ բարձրացրին, որ վաղուց չէր տեսնուած :

Ահա, այս էր ընդհանուր կետերով նկարագրուած փիլիսոփայական շարժումն, որին սովորաբար արարական են անուանում, ուշք դարձնելով միայն լեզուի վերայ, մինչդեռ իսկապէս յունա — սասանիական է : Սակայն, առաւել ճիշտ կրլինէր, եթէ նորան անուանէին յունական, որովհետև պտղալից տարրները դուրս են գալիս Յունաստանից : Յունաստանը համարվումէ միակ աղբիւր թէ ուղիղ մտածողութեան և թէ գիտութեան : Բաղդադի և Սիրիայի գերազանցութիւնը լատինական արեւմտից՝ նորանից է յառաջանում, որ նոցա աւելի մերձ էր յունական քաղաքակրթութիւնը : Խառանում և բաղդատում առաւել դիւրին էր ձեռք բերել Աւելիտեսի, Պտղոմէոսի և Արիստոտելիսի շարադրութիւնները քան թէ Փարիզում : Այո՛, եթէ բիւզանդացիներն իրանց գրական գանձերը, որոնց այդ ժամանակ չէին կարդում, լաւ պահպանէին, և եթէ Ա. դարում գտնուէին Բեսարիոններ կամ Լասկարիսներ, այն ժամանակ թոլորովին աւելորդ կրլինէր այդ տեսակ շրջապտոյտը, որի միջով ԺԲ. դարում հասնումէ մեզ յունական գիտութիւնը անցնելով Սիրիայի, Բաղդադի, Աորգովայի և Տուսգոյի միջով : Կարծես թէ մի գաղտնի նախախնամութեան հիման վերայ, երբ մի աղբի մէջ բանականութեան ճրագը հանգչելու վերայ է, իսկայն երևան է գալիս մի այլ աղբ նորան վառ պահելու համար : Աստի այն խեղճ Սիրիացիները, այն հալածուած ֆիլիզուֆները, այն Խառանցիների աշխատանքը ստանումէ առաջնակարգ արժանաւորութիւն, որոնց ժամանակակից մարդկութիւնը հալածանքի ենթարկեց իրանց Սկեպտիկականութեան պատճառով : Նոցա արարական լեզուով արած թարգմանութիւններին Եւրոպան ստացաւ Յոյների մտաւոր աշխատութիւնը փիլիսոփա-

յուժեան և գիտութեան վերաբերմամբ, որոնք հնութիւնից մնացած կարեւոր նշխարներ էին:

Յիրաւի, երբ Մարակոյի մէջ բոլորի երեսից թողուած վերջին արաքական գիտնական — Ավերսէսը միտնումէ, արեւմուտքը սկսած մեծ երկարամեայ թմբոս թիւնից, Արեւարդն անաջին անգամ աւետումէ վերածնող րացի օնալիզմուս Եւրոպայի հանձարը արտայայտումէ, և սկսումէ այն անսովոր շարժումը, որի վերջին խօսքը մարկային մտքի ազատութիւն է դառնում: Այն տեղ, Փարիզում Ս. Ժենեվիեֆի բլրակի վերայ մտաւոր աշխատանքի համար մի նոր սեղան են կանգնացրել: Եթէ մի բան էր պակասում, այս՝ հնութեան զուտ աղբիւրների գրքերի չըլինելն էր: Առաջին անգամ շատ հեշտ էր թուում նոցա փնդել այդ գրքերը: Ա. Պօլսի գրադարաններում, ուր պահուած էին բնագիրներ, քան թէ գիմել միջնորդական թարգմանութիւնների և հասկանալ այն լեզուով, որ շատ քիչ ընդունակ է յունական մտքն արտայայտելու: Բայց զժրադարար կրօնական վէճերը յունական և լատինական աշխարհում ստեղծեցին թշմանական յարաբերութիւններ, որոնք սաստիկ լարուած էին իրար դէմ 1204 թուի շարարադոս խաչակիրների պատերազմից յետոյ: Բացի սորանից, մեր մէջ չըկային յունագէտներ, ուստի պէտք էր սպասել երեք հարիւր տարի մինչև որ Լեֆեր Դ. Էտապլէսը և Բուդէն յերեան գային:

Չըլինելով յունական փիլիսոփայութեան բնագիրները, որոնք Բիւզանդեան մատենադարանում կային, պէտք էր դիմել Սպանեային և այն տեղից առնել վատ և շինծու թարգմանած յունական գիտութիւններ: Ես չեմ կամենում Գերբերդի մասին խօսել, որի ճանապարհորդութիւնը մահմետական երկիրներում մեծ տարակուսութեան է ենթարկուած: Սակայն Աոստանդին Ափրիկեցին ՓԱ. դարում բարձր է կանգնած իւր մահմետական կրթութեամբ բոլոր իւր ժամանակակիցներից և հայրենակիցներից: Բայմունդ եպիսկոպոսի Թոլեդոյում հիմնած գործունեայ թարգմանչաց բնկերութիւնը թարգմանումէ 1130 — 1150 թ. լատինական լեզուով արաբական գիտնականների բոլոր գրածքները: Արդէն ՓԳ. դարու սկզբում Փարիզի համալսարանը ընդունումէ իւր գիրկը հանդիսաւոր կերպով արաբական Արիստոտելին, Արեւմուտքը 4—5 դար շարունակվող ոչնչութիւնից ազատվումէ: Մինչև այդ ժամանակ Եւրոպան մահմետական երկիրներից կախումն ունէր գիտնական յարաբերութիւնների մէջ: Մինչև ՓԳ. դարու կէսը գործերի դրութիւնը մութն էր: Աւերջապէս մօտ 1275 թուին յառաջ են գալիս երկու շարժողութիւն, մի կողմից մահմետական երկիրները մօտենումն մեծ և ամենատիւր մտաւոր անկման, իսկ միւս կողմից արեւմտեան Եւրոպան ինքնուրոյն և համարձակ դուրս է գալիս ճշմարտութեան գիտնական հետազոտութիւնների ճանապարհը, որ նման է այն հսկայական աղեղին, որի լարը մինչև այժմ անչափելի է:

Այլ է նորան, ով որ մարդկային յառաջագիմութեան այլ ևս անկարող է ծառայել, նա գրեթէ դատապարտուած է անհետանալու: Հէնց որ գիտութիւնը—այդպէս կոչուած արարականը,—իւր կենսական ղեկընդունումէ լատինական արեւմտքին, ինքն իսկոյն անհետանումէ: Այն ժամանակուանից՝ երբ Ավերսէսը լատինական գլորոցներում՝ Արիստոտելին հաւասար փառք էր վայելում, մոռացվումէ նա (Ավերսէսը) իւր հատակիցներից, Արդէն ԺԲ. դարուց սկսած չէ երևում ոչ մի արարական ականաւոր փիլիսոփայ: Փիլիսոփայութիւնը միշտ հալածվումէր մահմետական երկիրներից, բայց և այնպէս չեն կարողանում բոլորովին ջնջել, ԺԲ. դարից աստուածաբանական րեակցեան գերակշռումէ, փիլիսոփայական գիտութիւնը մահմետական երկիրներից հեռանումէ: Այնուհետեւ թէեւ պատմագիրներ և զանազան գիտութիւնների մասին գրողներ յիշատակութիւն են անում նորա մասին, բայց տխուր յիշատակութիւն: Փիլիսոփայական գիտութիւնների ձեռագործներն ոչնչանումեն և հաղուադիւտ են դառնում: Աստղաբաշխութիւնը նոցա մէջ գոյութիւն է ունենում այն չափով, ինչ քան որ հարկաւոր էր նոցա աղօթիւս երկնքի դիրքը որոշելու համար: Ըուտով մահմետականութեան մէջ գերակշռութիւն է ստանում թրքական ցեղը, և այնուհետեւ ամեն ուրեք նկատելի էր, որ այս վերջինը բնաւ գիտական և փիլիսոփայական հետազոտութիւնների հոգի չունէին: Այդ ժամանակից, բացի մի քանի հաղուադիւտ բացառութիւններից, ինչպէս Իբն—Խալ-դուն, մահմետականութեան մէջ չէ տեսնվում ոչ մի ականաւոր մտածող գլուխ, որ ունենար լայն հայեացքներ գիտութեան մասին: Մահմետականութիւնը խեղդեց իւր գրկում գիտութիւնը և փիլիսոփայութիւնը:

Ես այս տեղ չաշխատեցի նսեմացնել արարական կոչուած մեծ գիտութեան նշանակութիւնը, որ ամբողջ մարդկութեան զարգացման պատմութեան մէջ մի նշանաւոր դարագլուխ է կալմում: Մի քանի յարաբերութիւնների մէջ չափազանցութեան էին հասցնում նորա ինքնուրոյն նշանակութիւնը, ինչպէս աստղաբաշխութեան վերաբերմամբ: Բայց, պէտք է մի այլ ծայրահեղութեան մէջ ևս ընկնել՝ տալով նորան շատ քիչ նշանակութիւն և գնահատութիւն: Արարական շրջանը գոյութիւն է ունենում հին քաղաքակրթութեան անյայտանալուց Չ. դարում՝ մինչև եւրոպական հանճարի վերածնութիւնը ԺԲ. և ԺԳ. դարերում: Այդ շրջանում մարդկային հանճարը պահպանվում և հետզհետեւ աւանդվումէր մահմետական երկիրներին: Բայց արդեօք արարական կոչուած գիտութեան մէջ ինչ էր իսկապէս արարական: Բացի լեզուից, ուրիշ ոչինչ: Մահմետական աշխարհակալութիւնը տարածեց ամեն ուրեք չիղջասի լեզուն: Արարական լեզուի կատարած դերն այն էր, ինչ որ լատինականը, որ միայն մարդու զգացումների և մտքերի արտայայտութեան էր ծառայում, չունենալով ամենափոքր յարաբե-

բութիւն անգամ հին Լացիումի հետ, Ավերսէսը, Ավեցին, Ալբատին այնքան Արար են, որքան որ մեծն Ալբերտը, Բոժեր Բակոնը, Քրանչիսկոս Բակոնը և Սպինոզան լատին են, Արարական գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը Արարիային վերագրելը նոյն տարակուսութիւնն է յառաջ բերում, ինչպէս Հոգովին՝ ամբողջ քրիստոնեայ լատինական գրականութիւնը, — բոլոր դպրոցականները, վերածնութիւնը, ԺԶ. դարու բոլոր գիտութիւնը, մասամբ ևս ԺԷ. դարունը և այս բոլորը նորա համար, որ նորա լատինական լեզուով են գրուած: Աւշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ արարական յիշուած փիլիսոփաներից և գիտնականներից միայն Ալկինդին արարական ծագումն ունի, իսկ միւս մնացածներն են. Պարսիկներ, Տրանսօքսացիներ, Բուխարացիներ, Սամարղանդցիներ, Վորդովացիներ և Սիվիլացիներ, նոքա ոչ միայն ըստ մարմնոյ, այլ և ըստ հոգւոյ արարականին հետ ոչինչ նմանութիւն չունին, Թէև նոքա արարիւրէն էին խօսում, բայց այս՝ նոցա համար մի կաշկանդող շղթայ էր, ինչպէս լատիններէնը միջնագարեան մտածող գրչուխների համար, որոնք իրանց քիմիի համեմատ էին գործ գնում: Արարիւրէն բանաստեղծական և ճարտասանական լեզու լինելով, բոլորովին անյարմար էր բնազանցութեան համար, Առ հասարակ արարական գիտնականներ և փիլիսոփաներ բաւական վատ գրողներ էին:

Այսպէս ուրեմն, այդ գիտութիւնը արարական չէ. բայց որչափով դա մահմետական է, Յոյց տո՛ւեց արգելօք մարգարէի կրօնը մի որ և է օգնութիւն կամ հովանաւորութիւն գիտնական հետազօտութիւններին: Ոչ, ոչ մի դէպքում: Մեծ գիտնական շարժողութեան պատիւը պատկանումէ Պարսիկներին, քրիստոնեաներին, Հրէաներին, Խառանցիներին և Իսմայէլացիներին, և այն մահմետականներին, որոնք ամբողջ հոգւով իրանց կրօնին ընդդէմ էին: Աւղղափառները նոցա վերայ անէծք էին թափում, Աստուածաբաններն անիծեցին Վամուն Խալիֆին, որ ամենից շատ հոգս էր տանում յունական փիլիսոփայութեան տարածման վերայ, նորա թագաւորութիւնը խաւարեցնող թշուառութիւնները բացատրումէին իբրեւ երկնային պատիժ ու պատուհաս նորա բռնած դիւշողական ընթացքի համար դէպի մահմետականութիւնից օտար եղած վարդապետութիւնները:

Հատ անգամ իմամներից յուզուած ժողովուրդը հանդարտեցնելու համար այրում և կամ ձգումէին ջրհորները փիլիսոփայական և աստղաբաշխական գրուածքները: Այդ գիտութիւններով պարապողներին անուանումէին զենդիկ (անհաւատ), նոցա փողոցներում անպատուում և հարուածումէն, այրումէին նոցա բնակութիւնները և երբեմն դատաւորները ամբոխին հաճոյանալու համար ի մահ էին դատապարտում:

Եւ ահա այսպէս, Մահմետի կրօնը այնքան հալածեց գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը մինչև որ կարողացաւ բոլորովին խեղդել: Մահմետական պատմութեան մէջ պէտք է զանազանել երկու շրջան՝ առաջը

իւր սկզբնաւորութիւնից մինչև ժԲ. դարը և երկրորդը ժԳ. դարուց մինչև մեր ժամանակը: Առաջին շրջանում նա թուլանում է զանազան ազանդներով, որով և դառնում է շատ քիչ Ֆանատիկական, և աւելի թոյլ կազմակերպուած քան թէ երկրորդ շրջանի կիսում, երբ նա տարածվում է սահմանափակ, կոշտ ու կոպիտ թաթարների և բերբերների ցեղերի մէջ: Մարգարէի կրօնը այն առանձնայատկութիւնն ունէր, որ իւր հետեւողների հաւատը հետզհետէ զօրացնում էր: Արօնական շարժողութեան մէջ մասնակցող առաջին արարները հազիւ թէ հաւատում էին մարգարէի առաքելութեանը: Նոքա մինչև գրեթէ երկու երեք դար չէին ծածկում իրենց տարակուսանքները այդ կրօնի վերաբերմամբ: Յետոյ սկսվում է այդ վարդապետութեան բացարձակ տիրապետութիւնը, որ ոչինչ խտիր չէր դնում աշխարհականի և հոգեւորականի մէջ, առաջ են դալիս ճշուններ և մարմնական պատիժներ իրանց կրօնը շինողունոյ մարդկանց դէմ: Մի խօսքով հալածանքների մի ամբողջ շարք, որ իւր ճշնող ազդեցութեամբ գերակշռեց միմիայն սպանիական հրափորձութիւնն (Inquisition): Ոչ մի ընկերական կազմակերպութիւն չէ կարող ազատութեան վնասել, ինչպէս իշխող քաղաքական կեանքում կրօնական վարդապետութիւն: Այդ տեսակ կառավարութեան վերաբերմամբ երկու օրինակ ունենք, մի կողմից մահմետական թագաւորութիւն և միւս կողմից առաջին պապերի աշխարհական իշխանութիւնը, միայն այն զանազանութեամբ, որ պապերինը աւելի փոքր տարածութեան վերայ էր, իսկ մահմետականինը ամբողջ երկրագնդի մեծ մասի վերայ և տաճում էր իր դաւանողների մէջ մարդկային յառաջագիմութեան գաղափարին ներհակ հասկացողութիւնները, գաղափար մի որ և է աստուածային յայտնութեան վերայ հիմնուած թագաւորութեան և հասարակութեան տիրապետող կրօնի վարդապետութեան մասին:

Մահմետականութիւն պաշտպանող ազատամիտները լաւ ծանօթ չեն նորա հետ: Մահմետականութիւնը՝ աշխարհականի և հոգեւորականի մէջ եղած մի աննկատելի հանգոյց է, նա վարդապետութեան տէրութիւնն է, նա ամենածանր շղթայ է, որով մի ժամանակ մարդկութիւնը կաշկանդուած էր:

Աս կրկնում եմ, միջին դարերի առաջին կիսում մահմետականութիւնը թոյլ է տալիս փիլիսոփայութեան նորա համար, որովհետեւ չէր կարողանում արգելք դնել նորա գոյութեանը, չէր կարողանում, վասն զի ինքն զեռ ևս լաւ կազմակերպուած չէր սարսափեցնող նպատակների համար: Ոստիկանական վարչութիւնը գտանվում էր քրիստոնեաների ձեռքը և այդ ժամանակ ամենամեծ ուշք դարձած էին Ալիդների ցեղերի անխնայ հալածման վերայ: շատ բան առանց ուշադրութեան էր մնում: Բայց, երբ մահմետականութիւնը իւր ջերմ պաշտողներն ունեցաւ, կարողացաւ ամեն բան խեղտել, կրօնական սարսափն ու կեղծաւորութիւնը սկսեցին թագաւորել: Մահմետականութիւնը միայն այն

Ժամանակ էր ազատամիտ՝ երբ որ թոյլ էր․ բայց երբ զօրացաւ, բռնակալ զարձաւ։ Մենք չենք կարող նորան վերագրել այն, որին նա անզօր էր արգելք դնելու։ Մասնատականու թեան վերագրել փիլիսոփայութիւն և գիտութիւն, որոնց նա իւր գոյութեան առաջին ժամանակները իսկոյն չըկարողացաւ ոչնչացնել, կրնշանակէ՞մէ ձեռարկ աստուածաբաններին ժամանակակից գիտութեան մէջ եղած գիւտերի համար, որոնք կատարուեցին բոլորովին հակառակ նոցա կամքին։ Արեւմտեան աստուածաբանութիւնը մասնատականութիւնից ոչ պակաս հալածանքներ է յաջուցել․ բայց նա չըհասաւ իւր նպատակին, այն է, չըկարողացաւ ջնջել երկրի երեսից ժամանակակից միտքը, ինչպէս որ մասնատականութեան յաջողուեց ջնջել այն երկիրներից՝ որոնց նա տիրապետել էր։ Այսպէս իրոպայում կրօնական հալածանքները տիրապետութիւն միշտ մի երկրում — Սպանիայում, ուր սարսափելի ճնշումները գիտնական հետազօտութիւնների ոգին մեռցրին։ Շտապներ ասել, որ, անկասկած այս քեղեցիկ երկիրը նորից վերածնվումէ։ Մասնատական երկիրներում յառաջացաւ այն, ինչ որ պիտի լինէր Եւրոպայում, եթէ Փիլիպպոս Ը-ը և Պիոս Լ-ը պապը իրանց նախագիծը կարողանային իրագործել և մարդկային մտքի ազատ զարգացումը կանգնացնել։ Պէտք է պարզ խոստովանել, որ ծանր է ինձ յարգանքը վերարերուել գէպի այդ անձինքը այնքանի համար, որ նոքա իրանց մտադրած չարիքը չըկարողացան իրագործել։ Ո՛չ, կրօնական վարդապետութիւնները ունեն գեղեցիկ բողոքներ, երբ որ նոքա միութարեւմեան մեղ և պահպանում մեր խեղճ մարդկութեան թոյլ կողմերը, միայն թէ պէտք չէ նոցա շնորհակալութիւն անել նոցա կամքին հակառակ կատարուած իրողութիւնների համար, որոնց խափան գնել անզօր էին *)։ Առհասարակ սովորութիւն չէ ժառանգել այն անձանց կարողութիւնը, որոնց որ սպանել են, պէտք չէ վերագրել հալածողներին, նոցանից հալածուածների աշխատութիւնները։

Աւղիղ այգպէս արած կըլինեն, եթէ մասնատականութեան աղղեցութեանը վերագրեն այն, ինչ որ նորա հակառակ կատարուեց, և որին նա բարեբաղդաբար չըկարողացաւ արգելք գնել։ Գովարանել մասնատականութիւնը Ավեցիոնի, Ավենցոարրի և Ավերսէօի համար, կրնշանակէ փառքանել կաթոլիկութիւնը Գալիլիոսի համար։ Աստուածաբանութիւնը սաստիկ ճնշումներ էր գործում Գալիլիոսի վերայ, և եթէ իւր անզօ-

(*) Մեր տղի պատմութեան տեղեակ անձինք կը վկայեն որ, մեր եկեղեցին եւ եկեղեցական վարչութիւնը հոկառակ ճառիտ մէջ յայտնած սկզբունքն, ժամանակն եւ նշանաւոր իրողութեան խնամակալ եւ սրտաւորն է հանդիսացել։ Գիշերը որ թէ հայկական աստ երի գիւտը եւ թէ տպողութիւնը եկեղեցու եւ եկեղեցական վարչութեան նախաձեռնութեամբ սկսուեց եւ արդ իւրեւոր կատարելութեան հասաւ։ Մեր եկեղեցին լինելով տղային՝ միշտ տղի կարիտը եւ բարբոթեան նախաձեռնողը եւ նահատակ է հանդիսացել։

րութեան պատճառով չըկարողացաւ նորա հետազոտութիւններին արգելք դնել—այդ հանգամանքը զեռեւ իրաւունք չէ տալիս, որ նա շնորհակալութեան արժանի լինի: Ես բնաւ ցանկութիւն չունիմ քննադատելու այն հաւատներից մինը, որոնց մէջ մարդկային խիղճը կարծում է հանգստութիւն գտնել նորան յուզող անլուծանելի հարցերից տիեզերքի և իւր ճակատագրի մասին: Ինչպէս կրօն՝ մահամտականութիւնն ունի իւր լաւ կողմերը: Ամեն անգամ, երբ ես նոցա մեծիտն էի մանում, յուզվում էի և մինչև անգամ . . . կարծես թէ ափսոսում էի մահատական չըլինելուս պատճառով: Սակայն մահամտականութիւնը մարդկային մտաւոր զարգացման վնասակար էր: Անկասկած, այն մտքերը, որոնց յարաբերութիւնը դէպի գիտնական աշխարհ նա կտրել էր, ըստ ինքեան սահմանափակուած էին: Բայց նա հալածեց ազատ մտքերը իրապէս, չեմ ասում աւելի զօրեղ քան զմիւս կրօնական գրութիւնները: Նոցա նուաճած երկիրները անընդունակ եղան խելքի և մտքի հիմնաւորապէս զարգացման:

Յիրաւի, մահամտականը զանազանվում է միւսներից իւր ատելութեամբ, դէպի գիտութիւնները: Նա համոզուած է որ ամենայն գիտնական հետազոտութիւն աւելորդ, աննշան և շատ անգամ անաստուածութիւն է: Աւսանել բնութիւնը, կրնշանակէ մրցել Աստուծոյ հետ: Իսկ պատմական գիտութեան առարկան մահամտականութիւնից առաջ եղած լինելով՝ կարող է առաջուայ յաղթահարուած մոլորութիւնները զարթեցնել: Այդ բանի վերաբերմամբ շատ հետաքրքիր է Շէյխ Միֆաայի արժանահաւատ վկայութիւնը: Նա մի քանի տարի Փարիզում անցկացրեց՝ եգիպտական ուսումնարանին ողորմութիւն հաւաքելու համար: Գառնալով Եգիպտոս, նա գրել է մի շարադրութիւն, որի մէջ բաւական հետաքրքիր նկատողութիւններ կան փրանսիական հասարակութեան մասին: Նա լիովին համոզուած է, որ ամբողջ եւրոպական գիտութիւնը առաջին բառից մինչև վերջինը ըստ նորա կարծեաց, մանաւանդ եւրոպայի հիմնական գրութիւնը բնութեան անսփոփոխելիութեան մասին կատարեալ հերետիկոսութիւն է: Պէտք է ասել, որ նորա հայեացքը մահամտական տեսակէտից իրաւացի է: Եայտնութեան վարդապետութիւնը միշտ հակառակում է ազատ հետազոտութեանը, որ կարող է նորան հերքել: Գիտնական գործունէութեան մերձաւորագոյն հեռանքներից մինն է հեռացումն աստուածային տարրի թանձրացեալ ֆակտորի աշխարհից, ուր առաջ նորա ներկայութիւնը կարծվում էր: Ես ասում եմ՝ հեռացումն, և այս զեռեւ չէ նշանակում բացասումն: Փորձը գերբնական տարրը հեռացնում է, և նորա շրջանը սահմանափակում: Բայց չէ՞ որ ամենայն կրօնի հիմքը գերբնական է: Մահամտականութիւնը, թշնամու պէս վերաբերելով գիտութեան, հակասում է ինքն իրան, և երբեմն չափազանց մեծ հակասութիւնը սաստիկ վտանգաւոր է լինում: Ինչպէս որ դժբաղդաբար պատահեց մահ-

մետականութեանը, որ սպանելով զիտութիւնը, սպանեց ինքն իրան և արժանացաւ աշխարհի մէջ լիակատար ոչնչութեան:

Այն ամենը, ով որ այն մօքի է թէ՛ մարգկային ամենայն հետազօտութիւն Աստուծոյ իրաւունքին դէմ մի եղեռնագործութիւն է, ընկնում է խուսափելի կերպով մտաւոր թուլութեան մէջ և կորցնում է ուղիղ մտածելու կարողութիւնը: Մասմետականների միջև պատահած ամեն մի վիճարանութեան վերջին խօսքը այս է. «Ալլահ աւալամ» — «Աստուած գիտէ բանը ինչու՞մն է»: Երբ Լեարդը, իբրեւ հանճարաւոր և զիտական հետազօտութիւնների սիրահար մարդ, իւր Մուսսուլ եղած միջոցին կամեցաւ քաղաքի բնակիչների մասին մի քանի տեղեկութիւններ հաւաքել (նոցա վաճառականութեան և պատմական աւանդութիւնների մասին), զիմեց Վադիին, վերջինս նորան մի նամակ գրեց հետեւեալ բովանդակութեամբ, որի թարգմանութեամբ պարտական եմ մի ծանօթ բարեկամիս:

«Իմ հռչակաւոր բարեկամ,

Աւրախութիւն կենդանեաց:

Այն, ինչի մասին որ դու ինձ հարցնումես վնասակար է և անօգուտ: Թէեւ իմ բոլոր կեանքս այս երկրումն եմ անցկացրել, բայց ոչ մի անգամ միտս չընկաւ համարել տներ և կամ տեղեկանալ նոցա բնակիչների որքանութեանը: Գալով այն բանին, թէ այս քաղաքը որքան ապրանք աւանակներով է ուղարկվում և որքանը նաւակով, ճիշտն ասած այս ինձ չէ վերաբերում: Գալով այս քաղաքի անցեալ պատմութեանը, Աստուած միայն գիտէ: Նա միայն կարող է պատմել, թէ քաղաքիս բնակիչները մինչև մասմետականութեան յաղթանակելը, ինչ տեսակ մոլորութիւնների մէջ են անցկացրել իրանց կեանքը: Մեզ համար վտանգաւոր կըլինէր, եթէ մենք այդ իմանայինք:

«Իմ բարեկամ, իմ գառնուկ, մի՛ աշխատիր իմանալ այն, ինչ որ քեզ չէ վերաբերում: Գուեկար մեզ մօտ և մենք պարզ սրտով քեզ ընդունեցինք: այժմ՝ գնա խաղաղութեամբ: Ի հարկէ, քո ինձ ուղղած բոլոր խօսքերն ինձ ոչինչ վնաս չըպատճառեցին, որովհետեւ խօսողն այլ մարդ է, իսկ լսողն ուրիշ: Քո ազգի մարդիկների սովորութեան համեմատ դու այցելեցիր շատ երկիրներ և վերջապէս ոչ մի տեղ երջանկութիւն չես գտնում: Իսկ մենք (օրհնեալ է Աստուած) այստեղ ենք ծնուած և չենք ցանկանում աստեղից հեռանալ:

«Լսիր որդեակս, բաց յԱստուած հաւատալուց ուրիշ բարձր իմաստութիւն չըկայ: Նա ստեղծել է աշխարհս, մի՞թէ կարող ենք նորա հետ հաւասարուելու փորձ փորձել, աշխատելով իմանալ նորա ստեղծագործութեան գաղտնիքը: Նայիր այդ աստղին, որ միւս աստղի շուրջ բոլորակաձև է պտտում: Նայիր միւսին, որի ետեւից զեռ ևս մի գէս է կախ ընկած: Նա քանի երրորդ տարում է մտնենում ու հեռանում այդ մասին,

որդեակս: բնաւ հոգս մի՛ անիր, նորան ստեղծող ձեռքը կարող է նորան ճանապարհ և ուղղութիւն ցոյց տալ:

«Բայց, գուցէ դու ինձ տես»: «ոյ մարդ, հեռացիր, ես քեզանից աւելի գիտնական եմ և տեսել եմ այնպիսի բաներ, որոնց մասին Պաղատար տեղամ չունի»: Բայց եթէ դու կարծումես, որ նորա քեզ ինձանից աւելի լաւ մարդ դարձրին, այն ժամանակ գալուստդ կրկնապատիկ կըշնորհաւորեմ: բայց ես փառաբանում եմ Աստուծոյ նորա համար, որ ես ինձ պէտք չեղած բան չեմ որոնում: Պաղատարի իրերէ հետ ես ծանօթ, որոնք ինձ չեն հետաքրքրում և որոնց ես արհամարհում եմ: Արդեօք շատ գիտութիւնը կըստեղծի՞ քեզ համար մի երկրորդ տաճար, և քո աչքերը, որ աշխատում են այնչափ ամեն ուրեք, ցոյց կըտան քեզ ճանապարհ դէպի զբախտ: «Բարեկամ, եթէ կամենումես երջանիկ լինել, աղաղակիր»: «Միայն Աստուած է Աստուած»: Մի՛ դործիր չար, և չես վախենալ ոչ Ռահուանից և ոչ մարդիկներից, և այսպէս քո երջանկութիւնը կըսկսուի»:

Այդ կողմն, իւր տեսակէտից, բուական լաւ փրկութիւն է: սակայն պէտք է զանազանել նորա մէջ հետեւեալը. մենք թէնորան և թէ նորա նամակը շատ հրապուրիչ ենք գտնում: սակայն նա այն բանը զգուելի է համարում, ինչի մասին որ այժմ խօսում ենք: Այդ տեսակ աշխարհահայեցողութիւնները կորստաբեր հետեւնքներ են ունենում հասարակութեան համար: Գիտնական մտքի բացակայութիւնից կարող է երկու երեւոյթ յառաջանալ — սնապաշտութիւն և կրօնական նեղ վարդապետութիւն (dogmatismus), սոցանից երկրորդը, գուցէ առաջինից աւելի վատ լինի: Արեւելքը սնապաշտ չէ, բայց նորա մեծ շարիքը, կրօնական նեղ վարդապետութիւնն է, որ բռնի կաշկանդումեմը հասարակութեանը: Մարդկութեան նպատակը անգործունէութիւն չէ համեստ տգիտութեան մէջ, այլ նորա նպատակն է մղել անխնայ պատերազմներ ստութեան և չարիքների դէմ:

Գիտութիւնը՝ հասարակութեան հոգին է, որովհետեւ գիտութիւնն է բանականութիւն, նա ստեղծում է պատերազմական և արդիւնաբերական գերազանցութիւն, նա պէտք է մի օր հասարակական գերազանցութիւն ստեղծի, ես կամենում եմ ասել, մի այնպիսի բնկերական կամ հասարակական գիտութիւն, ուր գտնվում է արդարութեան մի այնպիսի բանակութիւն, որ վայելէ տիեզերքի էութեան: Գիտութիւնը հարկադրում է զօրութեան՝ ծառայել բանականութեան: Ասիայում այժմ ևս գտնվում են բարբարոսութեան տարրեր, նման այն տարրերին, որոնց առաջին մահմետական զինւորների, Ատտիղառի և Զինգիս — խանի վայրենի ամբարիւղ յառաջացրին: Բայց գիտութիւնը նոցա ճանապարհը փակում է: Եթէ Օմարը, Զիզիսխանը պատահէին մի լաւ թնդանութեամբ զօրքերի, նորա իրանց անապատի սահմաններից դուրս չէին գալ: Պէտք է բոլորական մոլորութիւնների վերայ կանգնել: Ինչե՞ր չէին ա-

սուսմ սկզբում հրաձիգ զէնքերի դէմ սակայն, դոքա բաւական նպաստեցին քաղաքակրթութեան յաղթանակելուն: Գալով ինձ,—ես խոր համոզուած եմ, որ գիտութիւնը մի բարիք է, նա տալիս է զէնք շարիքի դէմ մարտնչելու և նորան ոչնչացնելու համար և վերջապէս նա պիտի ծառայէ միայն յառաջագիմութեան, ես այստեղ հասկանում եմ մի այնպիսի ճշմարիտ յառաջագիմութիւն, որ անխղճի կապուած է մարդու յարգանքի և նորա ազատութեան հետ:

(Թարգմ.)

Սարգիս Տէր Գարրիէլեանց.

1883 Նոյեմբերի 18

Գործողութիւն.

ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՇՏՏՈՆԷՆԻԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՍ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
Ս. ԵԿԵՂԵՅԻՈՅ.

Ա.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ.

Հայաստանեայց եկեղեցական Վարչութեան գլուխն է Ս. Էջմիածնի ընդհանրական Պատրիարք Կաթողիկոսը: Այս նուիրական իշխանութիւնը սկիզբն առաւ Ս. Գրիգոր Լուսաւորչից և մինչև մեծն Ներսէս Ա. հայրապետները Ս. Օսումը ստանումէին Կեսարիայում: Բայց 366 թուին Վաղարշապատում եղած ազգային եկեղեցական Համագումար ժողովով որոշուեց որ ընտրեալ Հայրապետը մեր եկեղեցւոյ եպիսկոպոսներից ընդունի կաթողիկոսական Ս. Օսումն, այլ ևս Կեսարիա չը գնայ:

Ազգիս քրիստոնէութիւն ընդունելու հետ սկսուած այս իշխանութեան աթոռը եղաւ Ս. Էջմիածին: Թէև քաղաքական հանգամանքների բերմամբ հայրապետական Աթոռը զանազան տեղեր փոխադրուեց, սակայն 1441 թուին Վաղարշապատի Համագումար ժողովի որոշմամբ նորից հաստատուեց Ս. Էջմիածնի Կաթողիկէ Մայր Եկեղեցւում, իւր հետքերը թողնելով Սուսմ և Աղթամարում: Ս. Էջմիածնի ընդհանրական հայրապետութեան հատուած Սրի և Աղթամարայ կաթողիկոսութիւնները մինչև ցայսօր գոյութիւն ունին, որոնց առաջինը կոչւում է Կաթողիկոսութիւն տանն Կիլիկիոյ, իսկ երկրորդը Կաթողիկոսութիւն Տանն Աղթամարայ: